ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ
ՀՊՄՀ, պատմ. գիտ. թեկնածու

ԱՅՐԱՐԱՏՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ - ՓՈԽԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

1206 թ. Զաքարյան եղբայրները Վաչե Ա. Վաչուտյանին նշանակեցին նորաստեղծ Այրարատյան նահանգն ընդգրկող տարածքում ստեղծված կողմնակալություն-փոխարքայության կողմնակալ-փոխարքա՝ «իշխանաց իշխան» կոչումով: Վաչե Ա. Վաչուտյանը[1] *եւ նրա հաջորդները շուրջ 150 տարի եղան կողմնակալ-փոխարքաներ: Նրանց օրոք տարածքում գործել են հոգեւոր երկու կենտրոններ՝ Անբերդի եպիսկոպոսական եւ Այրարատյան հայրապետական թեմերը:*

Անբերդի եպիսկոպոսական թեմը. *1206 թ. ստանալով Այրարատյան կողմնակալ-փոխարքայի պաշտոնը՝ Վաչե Ա. Վաչուտյանը, ապա նաեւ նրան հաջորդած որդին՝ Քուրդ Բ.-ն, լուրջ պայքար են ծավալել իրենց կողմնակալության սահմաններում լուծելու նաեւ հոգեւոր ինքնուրույնության հարցը՝ տիրելու Այրարատյան հայրապետական թեմին: Պայքարը չի դադարել նույնիսկ մոնղոլական գերիշխանության հաստատումից հետո, բայց ավարտվել է նրանով, որ 1243 թ. Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսը, ի պատասխան Վաչուտյանների պահանջի, Հովհաննավանքը հաստատել է իբրեւ եպիսկոպոսական անկախ աթոռ եւ Վաչուտ-*

[1] **Տ. Պետրոսյանց,** Վաչուտյաններ, Երեւան, 2001, 363 էջ. նաեւ՝ **Տ. Պետրոսյանց**, Թեղենյաց վանքը եւ նրա առաջնորդները, «Էջմիածին», 1977, Ը., էջ 48-51, «Վաչուտյանների իշխանական տան եկեղեցաշինական գործունեությունը», «Էջմիածին», 1977, Թ.-Ժ., էջ 84-86, «Աստվածընկալի վանքը», 1978, Գ., 57-61, «Սաղմոսավանքի գրացուցակի գրվելու ժամանակը», ԼՀԳ, 1981, թ. 1, էջ 82-84, «Վաչուտյան իշխանական տան տոհմածառը», ԲԵՀ, 1981, թ. 3, էջ 130-147, «Սաղմոսավանք», «Էջմիածին», 1981, Դ., էջ 55-58, «Մռավյան գյուղի Աստվածածին եկեղեցին եւ արձանագրությունները», ՊԲՀ, 1981, թ. 3, էջ 289-294, «Թեղենյաց վանքը իբրեւ մշակութային կենտրոն», ՊԲՀ, 1982, թ. 1, էջ 121-129:

յաններին ենթակա տարածքն օժտել եպիսկոպոսական թեմական իրավասություններով: Դրանով, հավանաբար, պայքարն ավարտվել է:

Կողմնակալության-փոխարքայության տարածքում հայրապետական թեմ ունենալու համար Վաչուտյանները պետք է նոր ժամանակներին ու ճաշակին համապատասխան հոգեւոր շինություններ կառուցեին: Աննախադեպ լայնածավալ շինարարական աշխատանքներ են սկսվել. պաշտպանական ու քաղաքացիական կառույցներին զուգահեռ՝ սկսվել է Հովհաննավանքի, Ուշիի Ս. Սարգիս, Եղիպատրուշ, Սաղմոսավանք, Տեղերի Կաթողիկե եկեղեցիների կառուցումը:

Վաչուտյան ընտանիքի հոգեւոր կենտրոն եւ տոհմական տապանատուն դառնալու պատիվը վիճակվել է Հովհաննավանքին, որի Կաթողիկե եկեղեցու շինարարությունն ավարտվել է 1217 թվականին. այն իր ճարտարապետական նկարագրով նույն ժամանակի կառույցների՝ Գանձասարի, Նորավանքի, Հառիճի հետ դարձել է Զաքարյան Հայաստանի շինարվեստի գագաթը:

1243 թ. Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսը հաստատել է Անբերդի եպիսկոպոսական թեմը՝ Հովհաննավանք կենտրոնով. նա Հովհաննավանքի թեմի համար առանձնացրել է Ապարանի եւ Արագածոտնի գավառների տարածքները: Կաթողիկոսական կոնդակը 1245 թ. Հովհաննավանք է բերել բանագնաց Վարդան վարդապետ Արեւելցին[2]: Թեեւ կաթողիկոսական կոնդակ-հրամանագիրը չի պահպանվել, սակայն դրա վիմագիր պատճենը փորագրված է Կաթողիկե եկեղեցու արեւմտյան պատին՝ մուտքից բարձր՝ հատուկ շրջանակի մեջ: Ահա այն. «Շնորհիւ բարերարին Աստուծոյ տէր Կոստընդին կաթողիկոս հայոց ի թուին ՈՂԲ. /1243/, յիշխանութեան Շահանշահի, որդոյ Զաքարիայի եւ մերոյ նահանգիս Քրդին, որդոյ Վաչէի, միաբանեցայ սուրբ ուխտիս Ոհաննու եւ... եւ ետու երկիրս սեփական վիճակ Սուրբ Կարապետիս յԱպարանուց ընդ որ բաժանի գետն Քասաղ մինչեւ յԱշնակ: Եւ սպասաւորք սորա՝ Մկրտիչ եպիսկոպոս եւ եղբարքս խոստացան կատարել զյիշատակ մեր յետ ելից մեր Բ. քառասունք եւ... Թէ ոք ի յազատաց կամ յիշխանաց հանել ջանան զվիճակս ի սուրբ Կարապետէս, անէծս առցէն յԱստուծոյ եւ յերկից սուրբ ժողովոյն, եւ ի Սուրբ Գրիգորի Լուսաւորչի աջէս եւ մէնջ ամէն»[3]:

---

[2] Վարդան վարդապետ Արեւելցի (մոտ 1198 թ., Գանձակ - 1271 թ., Խոր-Վիրապ)՝ հայ պատմագիր, աշխարհագրագետ, քերականագետ, մեկնիչ, փիլիսոփա, թարգմանիչ, մանկավարժ, հասարակական-եկեղեցական գործիչ («Հայկական սովետական հանրագիտարան», հ. 11, էջ 312):

[3] **Կ. Ղաֆադարյան**, Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները, Երեւան, 1948, էջ

Հայրապետական հոգեւոր թեմի գահին չհասնելու, բայց դրա փոխարեն եպիսկոպոսական անկախ թեմ ստանալու փաստն անգամ Քուրդ Ա. Վաչուտյանի ծանրակշիռ հաղթանակն էր, եթե նկատի ունենանք, որ երբ վերջինիս ժամանակակից՝ Խաղբակյան կողմնակալություն-փոխարքայության գահակալ, իշխանաց իշխան Պռոշը ԺԳ. դարի երկրորդ կեսին Պռոշյան (Խաղբակյան) եւ Օրբելյան իշխանական տների միջեւ ծագած հակասությունների պատճառով փորձել է իրեն ենթակա կողմնակալություն-փոխարքայությունում եպիսկոպոսական առանձին թեմ ստեղծել, Տաթեւի ու Նորավանքի եպիսկոպոսներ Տեր Հովհաննեսը եւ Տեր Սարգիսն այդ քայլը համարել են դավադրություն՝ «Պռոշ անունով մի իշխան՝ Վասակի որդին, ուզում էր Վայոց ձորի իր գավառն ու գյուղերը խլել եւ ուրիշ եկեղեցու տիրույթ դարձնել»[4] եւ, Օրբելյան կողմնակալություն-փոխարքայության գահակալ, իշխանաց իշխան Տարսայիճի առաջարկությամբ, գնացել են Հակոբ Ա. Կլայեցի հայրապետի մոտ ու վիժեցրել պառակտման փորձը: Պատմաբան Գրիգոր Գրիգորյանը գրել է, որ դավադրությունը «ոչնչացվեց հենց խանձարուրի մեջ»[5]:

Հովհաննավանքի Կաթողիկե եկեղեցու պատին պահպանված կաթողիկոսական կոնդակ-հրամանագրի արձանագրությունից հայտնի է, որ թեմի առաջին փաստացի աթոռակալը եղել է Մկրտիչ եպիսկոպոսը: 1245 թ. նրան հիշատակում է նաեւ պատմիչ Կիրակոս Գանձակեցին: Վարդան վարդապետ Արեւելցին 1245 թ. Սսի ազգային-եկեղեցական ժողովի (1243 թ.[6]) կանոններն ու սահմանումները բերել էր հյուսիսային Հայաստան, որ նշանավոր վարդապետներն այն վավերացնեն երդմամբ ու ստորագրությամբ: Նշանավորների թվում էր նաեւ «եպիսկոպոսն Անբերդոյ Մկըրտիչն»[7]:

Հովհաննավանքի 1245 թ. արձանագրությունը կարեւոր է նաեւ նրանով, որ փորագրվել է Ս. Կարապետ եկեղեցու արեւմտյան արտաքին պատին եւ հետագայում հայտնվել գավթի մեջ. ավելին՝ արձանագրության վերջնամասի մի քանի տառեր մնացել են որմնասյան տակ: Այստեղից

95: Թեեւ կաթողիկոսական կոնդակ-հրամանագիրը Հովհաննավանք է հասցվել միայն 1245 թ., սակայն լինելով Ամենայն Հայոց Հայրապետի հրամանագիրը՝ փորագրվել է գրման տարեթվով:

4 **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. եւ ծանոթ.՝ Ա. Աբրահամյանի, Երեւան,1986, էջ 300:

5 **Գ. Գրիգորյան**, Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII-XV դարեր), Երեւան, 1981, էջ 53:

6 «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5, Երեւան, 1979, էջ 613, հ. 11, էջ 83-84:

7 **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, Երեւան, 1961, էջ 310:

կարելի է եզրակացնել, որ 1245-ին գավթի շինարարությունը դեռեւս չէր հասել այդ հատվածին: Գավթի կառուցումն ավարտվել է 1250 թ-ին: Կառուցման սկիզբը, փաստորեն, պետք է համարել 1245 թ. հետո կամ այդ տարին: Եկեղեցու գավթի գմբեթի վրա փորագրված «Զառաջնորդ սուրբ ուխտիս զտէր Մկրտիչ»[8] կապակցությունը, թույլ է տալիս նկատել, որ 1250 թ. Մկրտիչ եպիսկոպոսը դեռեւս առաջնորդ էր:

Եպիսկոպոսական թեմի ստեղծումից հետո Վաչուտյանները, անշուշտ, ձգտել են թեմի գլուխ բարձրացնել ընտանիքի անդամներից կամ բարեկամական կապով իրենց հետ կապված որեւէ մեկին. հաջողվել է իրականացնել երկրորդը: 1260-ական թվականների կեսերին Հովհաննավանքի եպիսկոպոսական թեմի առաջնորդ է դարձել Քուրդ Ա.-ի կնոջ՝ Խորիշահ իշխանուհու հարազատներից մեկը՝ Համազասպը: Ուշիի Ս. Սարգիս եկեղեցու գավթի բարավորի արձանագրության մեջ նշվել է. «Ի տէր Յոհաննիսէ... Եւ տէր Համազասպայ... Ի թվիս ՉԺԳ. /1264/»[9]: Սա Համազասպի մասին առաջին տեղեկությունն է: 1288 թ. Կարապետ գրիչը Հովհաննավանքում ընդօրինակած «Մեկնութիւն գործոցն առաքելոյ Յոհաննու Ոսկեբերանի» ձեռագրում գրել է. «...զտէր Համազասպ եւ զամենայն ընտանիս իւր, զազգայինսն Մամիկոնեան»[10]: Սարգիս գրիչը 1289 թ. Հովհաննավանքում ընդօրինակած «Պատմութիւն Հայոց Ղեւոնդայ վարդապետի» ձեռագրի հիշատակարանում եւս գրել է, որ այն պատվիրել ու ստացել է «տէր Համազասպ ի պատուաւոր յազգէն Մամիկոնեանց»[11]: Հավանաբար, Համազասպը մանուկ հասակում հորաքրոջ՝ Խորիշահ իշխանուհու հետ Լոռիից փոխադրվել է Անբերդի տերերի արքունիք, կրթություն ստացել Հովհաննավանքի դպրանոցում, բարձրացել եկեղեցական աստիճանակարգով եւ, ի վերջո, դարձել եպիսկոպոսական թեմի առաջնորդ: Եթե նկատի ունենանք, որ երբ Համազասպն աղբյուրներում առաջին անգամ 1264 թ. հիշատակվել է, ըստ երեւույթին, լինելով 30-35 տարեկան, ապա պետք է ծնված լիներ ԺԳ. դարի 30-ական թվականներին:

Համազասպը եպիսկոպոսական աթոռ է բարձրացել, երբ իշխանության գլուխ էին Քուրդ Ա.-ն եւ գահակից որդին՝ Հասան իշխանը: 1270-ական թվականների կեսերին մահացել է Քուրդ Ա.-ն, 1283-ին՝ Հասանը, եւ վերջինիս փոխարինել է եղբայրը՝ Երկրորդ Դավիթը: Այս երեք

---

8 **Կ. Ղաֆադարյան**, Հովհաննավանքը..., էջ 117:

9 Ընթերցումը մերն է:

10 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԳ. դար, կազմ.՝ Ա. Մաթեւոսյան, Երեւան, 1984, էջ 611:

11 Անդ, էջ 635:

տիրակալների օրոք է գործել Համազասպ արքեպիսկոպոսը: Զաքարիա Քանաքեռցին գրել է, որ Համազասպը «...այր փառահեղ եւ ահարկու տեսողացն»[12] էր:

Համազասպի աթոռակալության տարիներին ոմն Վանականի որդի Հովաննեսը 1274 թ. սալապատել է Հովհաննավանքի գավթի հատակը եւ նորոգել դասերն ու արձանագրել. «...եւ առաջնորդ սրբոցս տէր Համազասպ եւ այլ եղբարքս խոստացան...»[13]:

Արձանագրություններում եւ ձեռագրերի հիշատակարաններում նշվել է միայն Համազասպ եպիսկոպոսի տոհմական պատկանելությունը: Կենսագրական որեւէ այլ տեղեկություն չի հայտնվել: Մամիկոնյան-Համազասպյան տոհմածառը թույլ է տալիս նկատել, որ Հովհաննավանքի առաջնորդ Համազասպ եպիսկոպոսը, տոհմի նահապետ Համազասպ Ա.-ից սկսած, չորրորդ սերնդից է, կարող է Մարծպան Ա.-ի, Քուրդ Ա. Վաչուտյանի աներոջ որդիներից Գրիգորի, Ասլանբեկի, Սարգսի կամ Ամիրայի, ինչպես նաեւ սրանց հորեղբայր Սմբատ Բ.-ի որդիներից մեկի՝ Համլիկի կամ Սադունի որդին լինել:

Համազասպ արքեպիսկոպոսի մեծագույն ծառայությունը մոնղոլական տիրապետության վայրիվերո տարիներին եղել է ձեռագրերի ընդօրինակումը: Պահպանվել ու մեզ են հասել եւ այժմ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են Համազասպ արքեպիսկոպոսի պատվիրած յոթ ձեռագրեր: Ձեռագրերն ընդօրինակվել են 1286, 1288, 1289 (երեք ձեռագիր), 1293, 1294[14] թվականներին: Այդ ձեռագրերն են՝ «Մեկնութիւն հանգստեան Յոհաննու», «Մեկնութիւն գործոցն առաքելոց Յոհաննու Ոսկեբերանի», «Պատմութիւն հայոց Ղեւոնդայ վարդապետի», «Մեկնութիւն հնգամատենին Վարդանայ Արեւելցւոյ», «Պատմութիւն Ագաթանգեղոսի», «Մեկնութիւն սաղմոսաց Ներսէսի Լամբրոնացւոյ»: Սրանց մեջ կան գործեր, որոնք նշյալ երկերի ամենահին ընդօրինակություններն են:

Համազասպ արքեպիսկոպոսը քաջ գիտակցել է իր գործի անհրաժեշտությունը: 1289 թ. ընդօրինակված «Ժողովածուի» հիշատակարանում անձամբ գրել է. «Այս պատմութիւն իմաստասիրական ոչ գոլով ի սուրբ մենաստանիս, ի վանս Յովհաննու, ես՝ տէր Համազասպ բազում փափա-

---

12 «Զաքարեայ սարկաւագի Պատմագրութիւն», հ. 3-րդ, Վաղարշապատ, 1870, էջ 30:

13 **Կ. Ղաֆադարյան**, նշվ. աշխ., էջ 106:

14 ՄՄ, ձեռագրեր 497, 510, 511, 512, 583, 591 (տես «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԳ. դար, էջ 595, 611-614, 633-634, 635, 722, 732-733):

գանաւք ի խնդիր էի, զի յետ իմ մնասցէ ինձ ընծայ ընդ մեծամեծս»[15]: Իր պատվիրած ձեռագրերը Համազասպ արքեպիսկոպոսն ընծայել է Հովհաննավանքի գրադարանին. «Եւ ընծայեցոյց զսա ի Սուրբ Կարապետն, ի վանս Յոհանու, ի լուսավորութիւն հաւատացելոց, եւ ի վարժումն մանկանց եկեղեցւոյ»[16]: Նա հոգ է տարել Հովհաննավանքի գրադարանի մասին, ձգտել հաստատուն պահել միաբանությունն այդ դժվարին ժամանակներում, որը գրիչ Քահանան 1294 թ. ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում այսպես է բնութագրել. «...ի դառն եւ յանցեալ ժամանակիս, յորում ոչ գոյր հանգիստ քրիստոնէից ի հարկապահանջութէնէ այլասեռիցն»[17]: Համազասպ արքեպիսկոպոսի պատվերով ձեռագրերն ընդօրինակել են «Կարապետ, Սարգիս, Յոհաննէս, Քահանա, Գրիգոր» գրիչները եւ ուրիշներ: Համազասպ արքեպիսկոպոսի անունը վերջին անգամ հանդիպում է հենց այդ՝ 1294 թ. ձեռագրի հիշատակարանում:

Անվանի պատմաբան Լեւոն Խաչիկյանն Արտազի իշխանական տան եպիսկոպոսական թեմի առնչությամբ գրել է. «Միջին դարերում Հայաստանի եկեղեցական թեմերի ու նշանավոր վանական հաստատությունների առաջնորդական պաշտոնը, գրեթե ամենուրեք, ժառանգական բնույթ էր ստացել եւ փոխանցվում էր առաջնորդի մերձավոր ազգականներից մեկին (մեծ մասամբ՝ եղբոր որդուն), որը պաշտոնի էր կոչվում իր տարեց հորեղբոր կենդանության օրոք եւ փոխարինում նրան՝ մահվանից հետո»[18]:

Հովհաննավանքում Համազասպ արքեպիսկոպոսին հաջորդել է Մամիկոնյան ընտանիքի մեկ այլ ներկայացուցիչ՝ Ներսես եպիսկոպոսը: Նրա անունն առաջին անգամ հանդիպում է 1310 թ. Հովհաննավանքում Սուպայ իշխանի եւ Տիկնանց իշխանուհու դուստր Մամախաթուն իշխանուհու պատվիրած Ավետարանի հիշատակարանում, որի համաձայն՝ ձեռագիրը գրվել է. «...յեպիսկոպոսութեան եւ յառաջնորդութեան աթոռոյս տէր Ներսէսի՝ սրբափայլ եւ ճգնազգեաց զուարթնոյ»[19]:

Այս Ներսեսի մասին եւս կենսագրական տեղեկություններ չեն պահպանվել: Մամիկոնյան-Համազասպյան տոհմի անդամների որոնումը հնարավորություն է ընձեռել հայտնաբերելու այդ ընտանիքի նոր անդամների, որոնց մի մասի ով լինելը հնարավոր է եղել պարզել եւ ըստ

---

[15] «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԳ. դար, էջ 633:
[16] Անդ, էջ 722:
[17] Անդ, էջ 732-733:
[18] **Լ. Խաչիկյան**, Արտազի հայկական իշխանությունը եւ Ծործորի դպրոցը, ԲՄ, պրակ 11, 1973, էջ 135:
[19] **Հ.Ղեւոնդ Ալիշան**, Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 172:

այդմ լրացնել տոհմածառի թե՛ Հասանյան ճյուղի, որ բնակության համար ընտրել էր Խաչենագետի վտակ Քոլատակի հովիտը, թե՛ Լոռիում հաստատված Մարծպան Ա.-ի որդի Գրիգորի ճյուղի եւս մի քանի սերնդի ներկայացուցիչների անուններ, իսկ մի մասի վերաբերյալ, փաստերի պակասի պատճառով, դեռեւս հնարավոր չէ ոչինչ ասել: Մեզ հաջողվել է պարզել, որ Ծառուտիճոր գավառի Խումիթ վանքում 1331 թ. ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում ներկայացվել են Մամիկոնյան գերդաստանի ներկայացուցիչ Վահրամը եւ նրա զավակները: Հիշատակարանի այդ հատվածում գրվել է. «Հայոց սուրբ նահատակին Վարդանայ շառավիղէն յառաջ եկեալ, ի տիրասէր եւ յաստուածասէր ազգէն Մամիկոնեանց, որդիքն պարոն Վահրամա՝ տէր Ներսէս, Արղունն եւ Քաին, եւ հանգուցեալ ի Քրիստոս եղբայր պարոնացս Սարգիս, եւ մայր սոցա Դատիկա, եւ քոյր սոցա Թամթերին»[20]: 1330-ական թվականներին Մամիկոնյան-Համազասպյան ընտանիքում այլ տեր Ներսես չի հիշատակվել: Հաշվի առնելով նույնաժամանակությունը՝ կարծում ենք, որ Վահրամի եւ Դատիկի որդի տեր Ներսեսը Հովհաննավանքի առաջնորդ Ներսես եպիսկոպոսն է: Ղեւոնդ Ալիշանն իր ձեռքի տակ եղած՝ 1318 թ. մի ձեռագրի հիշատակարանից արտագրել է. «...եւ զմարմնաւորն առեալ՝ հոգեւորին փոխանակէր, Ներսէս անուն, որ եւ մանկունս գնոց ստացեալ՝ վարժէր աստուածահաճոյ վարուք, եւ ի չափ հասուցեալ՝ տայր յուսումն բանի սպասաւորութեան. եւ այլոց բազմաց կարեկից եւ արդիւնարար լինէր, յաշխարհականս եւ ի վանականս. եւ զամենայն ժամանակս իւր՝ այսպէս անցուցանէր»[21]: Զաքարիա Քանաքեռցին Ներսես եպիսկոպոսի մասին գրել է. «...եղեւ Հայր Ներսէս: Սա ազգական էր Համազասպա, զայր ուսաք ի յիշատակարանաց գրոց, զոր ետ գրել. եւ բազումք կան գրոց նորա առ մեզ»[22]: Փաստորեն, նա ձեռագրեր է պատվիրել, որոնք Զաքարիա Քանաքեռցու օրոք՝ ԺԸ. դարում, դեռեւս եղել են վանքի գրադարանում, սակայն դրանցից որեւէ մեկը մեզ չի հասել: Ներսես եպիսկոպոսի հիշատակմանը վերջին անգամ հանդիպում ենք Թեոդոս Զրքինի՝ Հովհաննավանքի 1350 թ. արձանագրության մեջ. «...եւ առաջնորդ սուրբ ուխտիս

[20] «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմ.՝ Լ. Խաչիկյան, Երեւան, 1950, էջ 332:

[21] **Հ. Ղեւոնդ Ալիշան**, Այրարատ, էջ 172. տես «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 129:

[22] «Զաքարեայ սարկաւագի Պատմագրութիւն», էջ 30:

տէր Ներսէս եւ սպասաւորքս խոստացան Ա. քառասունք պատարագել զՔրիստոս յամէն ամի»[23]:

Թեեւ Մամախաթունի՝ 1310 թ. պատվիրած Ավետարանի հիշատակարանում Ներսես եպիսկոպոսը հիշվել է Հովհաննավանքի առաջնորդ, Զաքարիա Քանաքեռցին մի խաչքարի վրայից արտագրել է 1311 թվակիր արձանագրություն. «զՎասիլ հայր Յոհաննու վանից՝ առաջնորդ Շիրակա եւ ամենայն Անբերդու, յիշեցէք ի Քրիստոս: Թուին ՉԿ.»: Այս Վասիլի մասին այլ տեղեկություն հայտնի չէ, ինչպես նաեւ նրա անունը կրող խաչքարը եւս չի պահպանվել, ուստի դժվար է ճշտել՝ նա եղել է Ներսես եպիսկոպոսից առա՞ջ, թե՞ միաժամանակ նրա հետ, ի՞նչ հանգամանքով է եղել նաեւ Շիրակի եւ Անբերդի առաջնորդ, երբ նշյալ եպիսկոպոսական թեմի սահմաններն արեւմուտքում ավարտվել են Աշնակում եւ անգամ չեն հասել Շիրակի սահմաններին:

Անբերդի եպիսկոպոսական թեմի գավազանագիրք [24]

(1243-1350-ական թվականներին)

1. 1245 - մոտ 1260 թթ. - Մկրտիչ եպիսկոպոս,

2. 1264 – 1300 թթ. - Համազասպ արքեպիսկոպոս,

3. 1300 /± / - 1350 թթ. - Ներսես եպիսկոպոս,

4. 1311 թ. /± / - Վասիլ,

5. 1352 թ. - Աբրահամ:

Այրարատյան հայրապետական թեմը. *Այրարատյան հայրապետական հոգեւոր գահը խիստ կարեւոր դեր է ունեցել Զաքարյան Հայաստանի թե՛ անկախ պետականության, թե՛ մոնղոլական տիրապետության կիսանկախ իշխանության քաղաքական ու տնտեսական հարցերի լուծման գործում. թեմի առաջնորդը, ԺԲ. դարից սկսած, երեք այլ թեմերի թվում վճռական ձայն է ունեցել Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունների ժամանակ[25]: Այդ վիճակի գնահատումը, թերեւս, 1331-ին Ծառուտիճոր գավառի Խումիթ վանքում Մկրտիչ գրչի ընդօրինակած «Հայր Մաշտոցի» հիշատակարանն է, որտեղ թվարկվել են ժամանակի իշխանավորները: Ահա այդ հատվածը. «...ի թվական Հայոց ՉՁ. /1331/... ի*

[23] **Կ. Ղաֆադարյան**, նշվ. աշխ., էջ 92-94:

[24] Գավազանագրքի տեղեկությունները քաղված են վիմագրական, մատենագրական աղբյուրներից. նշյալը երբեմն արտացոլում է այն որոշակի թվականը, երբ տվյալ անձը հիշատակվել է:

[25] **Հ.Ղեւոնդ Ալիշան**, Այրարատ, էջ 272:

ղանութեան Բուսախտին, ի թագաւորութիւն վրաց Գաւրգէ, ի հայրապետութեան Հայոց տեառն Գրիգորոյ, եւ ի հայրապետութեանն Աղուանից տեառն Զաքարիայի, յեպիսկոպոսութեան Այրարատեան գաւառիս տէր Գրիգորոյ...»[26]*:*

Հայաստանի տարածքների ազատագրման ավարտին Զաքարե Բ. եւ Իվանե Ա. եղբայրները, մինչեւ կողմնակալություն-փոխարքայություններ հիմնելը, որոշել են ազատագրված տարածքները բաժանել: Զաքարե Բ.-ի տանն էր պատկանելու Լոռին, Շիրակը, Այրարատյան նահանգի հիմնական մասը, իսկ Իվանե Ա.-ին՝ Գեղարքունիքը, Վայոց ձորը, Սյունիքը, Բջնին եւ Դվինը: Կողմնակալություն-փոխարքայությունների հիմնումից հետո Զաքարե Բ.-ն Այրարատյան կողմնակալ-փոխարքայի պաշտոնը տվել է իր զորավար Վաչե Ա. Վաչուտյանին. այդ նշանակումը Իվանե Ա.-ին թելադրել է Այրարատյան կողմնակալություն-փոխարքայության հայրապետական թեմի առաջնորդի գահը պահել իր բաժնում: Այդ քայլի իրագործմանն օգնել է եւ այն, որ դեռեւս 1031 թ. Պետրոս Գետադարձ կաթողիկոսը Բջնիում եպիսկոպոսական թեմ էր հիմնել:

1201 թ. Բջնիում հաստատված Իվանե Ա.-ն հասել է նրան, որ Բջնին դառնա Այրարատյան հայրապետական թեմի կենտրոն: Իվանե Ա.-ն, այնուամենայնիվ, կասկածել է, որ Այրարատյան հայրապետական հոգեւոր թեմի գերագահության համար կարող են մրցակիցներ դառնալ Վաչուտյանները եւ Պռոշյանները: Այդ կասկածն է եղել պատճառ, որ նա 1203/4 թվականին իր նոր մայրաքաղաք Դվին տեղափոխվելիս ապահովության համար իր հետ տանի Բջնիի եպիսկոպոսին: Կիրակոս Գանձակեցին 1205 թ. Զաքարե Բ.-ի հրավիրած՝ Լոռեի եկեղեցական ժողովի մասնակիցներին թվելիս Բջնիի եպիսկոպոսին ներկայացրել է այսպես. «...Վրթանէս Բջնոյ եւ Դունայ»[27]*: Վրթանես եպիսկոպոսը մասնակցել է նաեւ 1209 թ. Անիի եկեղեցական ժողովին:*

Ամենայն հավանականությամբ, Այրարատյան կողմնակալ-փոխարքա Վաչուտյանները երկար են պայքարել հայրապետական հոգեւոր թեմի գահի համար, բայց նրանց պայքարն արդյունավետ չի եղել եւ ավարտվել է Հովհաննավանքի եպիսկոպոսական թեմի հիմնումով. այդ տեղի է ունեցել 1243-ին: Եվ միայն դրանից հետո Բջնիի հայրապետական հոգեւոր թեմի գահակալները, պայքարը համարելով ավարտված, վերադարձել են Բջնի:

Այրարատյան կողմնակալություն-փոխարքայության հայրապե-

[26] «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 232:
[27] **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, էջ 172:

տական աթոռի գահակալների՝ Բջնիից բացակայելու մասին հուշում է նաեւ հետեւյալ փաստը. ազատագրական մարտերի մասնակից Վասակ Խաղբակյանի եղբայրը՝ Գրիգորը, որպես պարգեւ ստացել էր Այրարատյան նահանգի Ուրծ գավառի մի մասը: Գրիգորը նստավայր էր դարձրել Վանստան գյուղը, հոգեւոր կենտրոն՝ Աղջոց Ս. Ստեփանոս վանքը:

Աղջոց Ս. Ստեփանոս վանքի եւ Վանստանի եկեղեցիների երկու արձանագրություններ տեղեկություն են հաղորդում Այրարատյան հայրապետական հոգեւոր թեմի գահակալի վերաբերյալ: Աղջոց Ս. Ստեփանոս եկեղեցու հարավային պատի վերին ձախ անկյունում փորագրված շինարարական արձանագրության երկրորդ-չորրորդ տողերում կարդում ենք. «...թվին ՈԿԶ. /1217/, յիշխանութեանս Իւանեի եւ ի հայրապետութեանս տէր Դաւթի, ես՝ Աբել, վարդապետաց վարդապետ, առաջնորդ եկեղեցոյս, միաբանութեամբ եղբարցս շինեցաք զեկեղեցիս մեծաւ աշխատութեամբ»[28]:

Ո՞վ է այս տեր Դավիթը, որի հայրապետության օրոք կառուցվել է եկեղեցին... Պատմաբան Սուրեն Սաղումյանն այս Դավթին նույնացրել է 1204-1208 թթ. Աղթամարում իրեն աթոռակից հայտարարած Դավիթ Գ. Արքայկաղնեց կաթողիկոսի հետ: Նա ենթադրել է, որ արձանագրության ՈԿԶ. (1217) թվականը վստահելի չէ, եւ այն սրբագրել է ՈԾԶ. (1207)-ով, որպեսզի եկեղեցու կառուցման ժամանակը համապատասխանի Դավիթ Գ. Արքայկաղնեցու ապրած ժամանակաշրջանին[29]:

Մեր կարծիքով՝ արձանագրության մեջ հիշատակված տեր Դավթի ինքնության պարզաբանման համար խիստ կարեւոր է Վանստան գյուղի եկեղեցու շինարարական արձանագրությունը: Ըստ այդ արձանագրության՝ եկեղեցին կառուցել է Այրարատյան կողմնակալության հայրապետական առաջնորդ Հասամատինի թոռ, Գրիգորի որդի տեր Դավիթը: Գյուղի եկեղեցին կառուցվել է Իվանե Ա.-ի օրոք, այսինքն՝ 1213 թ. կամ հաջորդող տարիներին՝ Զաքարե Բ.-ի մահից հետո[30]:

Աղջոց Ս. Ստեփանոս եկեղեցու եւ Վանստանի եկեղեցու արձանագրություններում հիշատակված «ի հայրապետութեանս» տեր Դավիթը եւ Հասամատինի թոռ, Գրիգորի որդի տեր Դավիթը նույն անձնավորությունն են: Այս նույնացումից հետո վերանում է Աղջոց Ս. Ստեփանոսի

---

[28] **Ս. Սաղումյան**, Պատմական մի հուշարձանի կառուցման հարցի շուրջ, ՊԲՀ, 1986, թ. 2, էջ 199:

[29] Անդ, էջ 201:

[30] **Պ. Դոնաբեդյան**, Վանստան գյուղի եկեղեցու բարձրաքանդակի մասին, ՊԲՀ, 1979, թ. 1, էջ 156-157:

չինարարական արձանագրությունը սրբագրելու անհրաժեշտությունը: Այն, իրոք, պետք է 1217 թ. գրված լինի: Նման սրբագրության առիթ, կարծում ենք, դարձել է «ի Հայրապետութեանս» արտահայտությունը, որից եզրակացվել է, որ այստեղ անպատճառ պետք է փնտրվի Հայրապետ-կաթողիկոս, մինչդեռ Այրարատյան հայրապետական հոգեւոր թեմի առաջնորդը նույնպես «Հայրապետ» էր:

Օրինակներ առկա են Գեղարքունիքում, որի տարածքի մի մասը ԺԳ.-ԺԴ. դարերում գտնվում էր Օրբելյանների ու Պռոշյանների իշխանության ներքո եւ ենթակա է եղել Սյունյաց հայրապետական թեմին: Լիճք գյուղի Ծաղկեվանք եկեղեցու ներսում գտնվող խաչքարի պատվանդանին 1284 թ. փորագրվել է. «Ի հայրապետութեան տէր Գրիգորի, մենք՝ :5: եղբայր՝ Աբրահամ քահանայ... եւ այլքս[31]»: Այս տեր Գրիգորը 1262-ից եղել է Սյունյաց հոգեւոր թեմի գահակալ: Թազագյուղի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու պատին 1286 թ. փորագրվել է. «...եւ իշխանութեամբ Տարսայիճին եւ պարոնութեամբ Լիպարիտի եւ հայրապետութեամբ տէր Գրիգորոյ...»[32]: Այս տեր Գրիգորը համատեղել է Օրբելյանների ու Պռոշյանների կողմնակալություն-փոխարքայությունների հոգեւոր հայրապետությունը: Դրա վկայությունն է Գավառի տարածաշրջանի Փառականք բնակատեղի հարավային գերեզմանոցի մեծ խաչքարի վրա եղած արձանագրությունը. «Ի պարոնութիւն Պռոշոյ, եպիսկոպոսութեան տէր Գրիգորոյ, ես Մանուչայ կանգնեցի զխաչս, թվ. ՉԻԲ. /1273/»[33]:

Վրթանես եպիսկոպոսից հետո՝ 1243-1267 թվականների միջեւ ընկած ժամանակահատվածում, Բջնիում հիշատակվում են Վանական ու Գրիգոր եպիսկոպոսները: Պատմիչ Կիրակոս Գանձակեցին գրել է, որ Վարդան Արեւելցին 1243 թ. հանդիպել է նաեւ վերը հիշված եպիսկոպոսներին: Նա գրել է. «...եւ եկեալ վարդապետն Վարդան եւ որք ընդ նմա առաքելքն ի կաթողիկոսէն յԱրեւելս... եւ եպիսկոպոսքն Բջնոյ՝ Վանականն եւ Գրիգոր...»[34] ու հանդիպել են նրա հետ: Այս եպիսկոպոսներն Այրարատյան հայրապետական հոգեւոր թեմի գահի վրա հաջորդել են իրար: Գեւորգ Լամբրոնացին «Տօնապատճառ»-ի հիշատակարանում գրել է. «...ս/ուր/ը ծերունին... աստուածապատուեալ արհիեպիսկոպոսն տէր Գրիգոր, որ ունէի զվերատեսչութիւն այցելականն դիտման՝ քահա-

---

[31] «Դիվան հայ վիմագրության», պրակ IV, Գեղարքունիք, կազմ.՝ Ս. Բարխուդարյան, Երեւան, 1973, էջ 135:

[32] Անդ, էջ 198:

[33] Անդ, էջ 253:

[34] **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, էջ 310:

նայական դասու կատարող պետութեան Այրարատեան նահանգին, ներակայան ունելով զամուրն Բջնի...»[35]: Փաստորեն, հիշյալ 1267 թ. Գրիգոր արքեպիսկոպոսը մահացել է, եւ նրա փոխարեն աթոռակալ է դարձել Վանական եպիսկոպոսը:

Վանական եպիսկոպոսին հաջորդել է երկրորդ Գրիգոր եպիսկոպոսը: Նա Այրարատյան հայրապետական հոգեւոր թեմի առաջնորդի պաշտոնում հիշատակվում է գրիչ Սարգիսի՝ Նեղուս վանքում արտագրած «Մեկնութիւն աղաւթից եւ պատարագի Խոսրովի Անձեւացւոյ» ձեռագրի հիշատակարանում. «Եւ արդ գրեցաւ գիրքս հրամանաւ եւ արդեամբք սուրբ եւ առաքելաշնորհ եպիսկոպոսին Բջնոյ տէր Գրիգորի, ի թիւս Հայոց ՉԻԱ. /1272/»[36]: Այս Գրիգոր եպիսկոպոսը Անբերդի եպիսկոպոսական թեմի առաջնորդ Համազասպի ժամանակակիցն է: Երկուսով հիշվել են Մուղնու Ս. Գեւորգ եկեղեցում Սիմոն գրչի 1278 թ. արտագրած «Տաւնական»-ի հիշատակարանում. «Եւ եպիսկոպոսութեան տէր Գրիգորոյ եւ տէր Համազասպայ՝ սուրբքն ի մէջ սրբոց, ջահք պայծառք ի դրան կաթողիկէ եկեղեցւոյ»[37]:

Գրիգոր եպիսկոպոսը մահացել է 1287 թ., եւ նրան հաջորդել է Հովհաննես եպիսկոպոսը: Այս մասին տեղեկանում ենք 1287 թ. Նիգ գավառի Թեղենյաց վանքում Դավիթ գրչի արտագրած «Աւետարան»-ի չափածո հիշատակարանից.

«Եւ աթոռոյս մեծ Բջնեցւոյ
Զտէր Յովհաննէս եպիսկոպոս ձեռնադրեցին,
Եւ ի նախնեաց վիճակ հրաւիրեցին:
Եկեղեցոյս Սուրբ Թեղենեաց
Տէր վերատեսուչ մեծ Գրիգոր,
Որ Բջնեցին էր բանաւոր
Եւ հանճարեղ, հոչակաւոր»[38]:

Հովհաննես արքեպիսկոպոսին հիշատակել է նաեւ 1302 թ. նույն Թեղենյաց վանքում արտագրված «Աւետարան»-ի գրիչ Մկրտիչը. «...սրբազան եւ աստուածապատուեալ արհիեպիսկոպոսն տէր Յովհաննէս, որ ունէր զվերատեսութիւն այցելականն դիտման քահանայականն դասու

[35] «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԳ. դար,, էջ 350:
[36] Անդ, էջ 424:
[37] Անդ, էջ 476:
[38] Անդ, էջ 601:

կատարողապետութեան Այրարատեան նահանգիս, նիստ կայանի ունելով զամուրն Բջնի...»[39]:

Հնարավոր է, որ Հովհաննես եպիսկոպոսի օծումից հետո՝ ինչ-որ ժամանակ, Հովհաննավանքի առաջնորդ Համազասպ եպիսկոպոսը համատեղել է Անբերդի եպիսկոպոսական եւ Այրարատյան հայրապետական հոգեւոր թեմերի առաջնորդի պաշտոնները: Դրա վկայությունն է Կարապետ գրիչի՝ 1288 թ. հիշատակագրությունը. «...եւ տէր Համազասպ մեծապատիւ եւ առաքելաշնորհ արհիեպիսկոպոս, վերադիտող տանս Այրարատու եւ մեծ մենաստանի վանից Յոհաննու»[40]:

Այրարատյան հայրապետական հոգեւոր թեմի գահին 1330-ական թվականներին եղել է երրորդ Գրիգորը: 1331 թ. Մկրտիչ գրիչի հիշատակարանում, այլ իշխանավորների թվում, ներկայացվել է նաեւ «յեպիսկոպոսութեան Այրարատեան գաւառիս տէր Գրիգորոյ»[41]:

Մեզ հետաքրքրող ժամանակահատվածում Այրարատյան կողմնակալություն-փոխարքայության հայրապետական հոգեւոր թեմի գահակալ է եղել Վանական Բ. եպիսկոպոսը: Վերջինս սպանվել է Լենկ Թեմուրի հրոսակների ձեռքով: Հիշատակարանագիրը գրել է.

«...Յորոց և մի էր Բրջնին,
Որ էր աթոռ երկուց պետին,
Զոր առին և քանդեցին,
Զեպիսկոպոսն սպանեցին...»[42]:

Այրարատյան հայրապետական թեմի գավազանագիրքը

(1205-1387 թթ.)

1. 1205-1209 թթ. - Վրթանես եպիսկոպոս՝ մասնակից Լոռու և Անիի ժողովների

2. 1217 թ. - Դավիթ եպիսկոպոս (որդի Գրիգորի)

3. 1267 թ. + - Գրիգոր Ա. արքեպիսկոպոս

4. 1267 թ. - Վանական Ա.

5. 1272-1287 թթ. - Գրիգոր Բ. եպիսկոպոս

---

[39] «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 6:
[40] «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԳ. դար,, էջ 611:
[41] «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 232:
[42] «ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ. Ա., Երեւան, 1955, էջ 275:

6. 1287-1302 թթ. /±/ - Հովհաննես արքեպիսկոպոս

7. 1288 թ. - Համազասպ եպիսկոպոս Մամիկոնյան (Հովհաննավանքի հեր համարեղ)

7. 1306 թ. - Սարգիս

8. 1331 թ. - Գրիգոր Գ. արքեպիսկոպոս

9. 1358 +1387 թթ. - Վանական Բ. եպիսկոպոս:

РЕЗЮМЕ

Вече I Вачутян и его преемники около 150-и лет правили в Айраратском наместничестве. Наместники Вече I, Курд I, Гасан, Давид, Курд II, Теодос Чркин участвовали в культурной жизни, развивали церковно-строительную деятельность в подчиненной им области. Они построили Оганаванк,Тегер, Сагмосаванк, Уши, Египатруш, Аствацнкал церковные комплексы, церковно-победоносную арку Карби, обеспечив земельными поместьями, домами, а также дорогими подарками и книгами. По их требованию Католикос Всех Армян Константин Барцрабердци в 1243 году основал Епископальную епархию с центром Оганаванк, которая привела к завершению борьбы Вачутянов за владение Айраратской Епархии в Бжни. Предводителями Ованнаванка стали архиепископ Амазасп и епископ Нерсес. До наших дней сохранились семь рукописей архиепископа Амазаспа. Историк Закария Канакерци писал, что в 17-ом веке в церкви были рукописи, созданные во времена епископа Нерсеса. К сожалению, ни одна из рукописей не сохранилась до наших дней. В статье также представлены епархия Айрапетакан в Бжни и приведены списки патриархов Анберда и Бжни в 1200-1380 годах.

SUMMARY

Nearly 150 years, Vache I Vachoutyan and his successors ruled Ayrarat vicegerency. Vicars Vache I, Kurd I, Hasan, David, Kurd II, Teodos Churkin took active part in cultural life as well as in church-building activities in their subordinate area. They built Hovhannavank, Tegher, Saghmosavank, Ushi, Yeghipatrush, Astvatsnkal church complexes and Karbi church-victorious arch providing them with land estates, houses, expensive gifts and books. At their request, the Catholicos of All Armenians Constantine Bartsraberdzi founded the episcopal diocese with the Hovhannavank center in

1243, which led to the end of the Vachoutyans' struggle for the possession of the Ayrarat diocese in Bjni. The leaders of Hovhannavank became archbishop Hamazasp and bishop Nerses. Only seven manuscripts of archbishop Hamazasp have survived to the present days. The historian Zakaria Kanakertzi wrote that in the 17th century the church had manuscripts created during the time of bishop Nerses. Unfortunately, none of the manuscripts have survived to our days. The article also speaks about the diocese of Hayrapetakan in Bjni and presents the lists of the patriarchs of Anberd and Bjni in 1200-1380.